ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի.

ք. Գավառ 28 դեկտեմբերի 2022թ.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը եվ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 13-րդ կետի համաձայն սույն թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 11:00-ին՝ հետադարձ աճուրդի ներկայացման վերջնաժամկետին, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում տեղի ունեցավ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով (eauction.armeps.am կայք) համակարգի միջոցով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Գ. Ն. Աբրահամյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Ս. Բ. Ղարաբաղցյան

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

հ/հ	**Մասնակիցների անվանումները**	**Մասնակիցների ՀՎՀՀ-ները**	**Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեները**	**Մասնակիցների հեռախոսահամարները**
1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	02662703	maxoil@mail.ru	010-52-67-51
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	01808789	flash@flashltd.am	010-53-42-33

Հանձնաժողովը գնահատեց.

1) «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1, ըստ որի գնային առաջարկ է ներկայացվել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար,
- առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր,
- իրական շահառուների մասին հայտարարագիր,

2) «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1, ըստ որի գնային առաջարկ է ներկայացվել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար և լիազորագիր՝ ընկերության անունից ընթացակարգին մասնակցելու մասին,
- առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր,
- իրական շահառուների մասին հայտարարագիր:

Գնման առարկայի նախահաշվային գինը՝

Բենզին պրեմիում, կտրոններով	**Բենզին ռեգուլյար, կտրոններով**	**Դիզելային վառելիք ամառային, կտրոններով**
648.000 /վեց հարյուր քառասունութ հազար դրամ/	104.000 /մեկ հարյուր չորս հազար դրամ/	1.852.500 /մեկ միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր դրամ/

3) Էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում մասնակիցների կողմից նախօրոք ներկայացված գնային առաջարկները նվազեցվել են և աճուրդն ամփոփելու պահին մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները առանց ԱԱՀ-ի կազմել են՝

Չափաբաժինը	**Գնման առարկայի անվանումը**	**«Մաքս Օիլ» ՍՊԸ**	**«ՖԼԵԾ» ՍՊԸ**
1	Բենզին պրեմիում, կտրոններով	346.120	350.000
2	Բենզին ռեգուլյար, կտրոններով	57.652,66	58.266
3	Դիզելային վառելիք ամառային, կտրոններով	1.104.042,5	1.116.250

4) Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

5) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածների պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

✓ 1-ին 2-րդ և 3-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին:

✓ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք

բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 3-րդ բաժնի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի հայտը գնահատվում է բավարար, իսկ մյուս մասնակցի հայտը մերժվում է:

- ✓ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի հանձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:
- ✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել անգործության ժամկետի ավարտին հաջորդող հետո չորրորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ		Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Գ. Ն. Աբրահամյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար		Ս. Բ. Ղարաբաղցյան